ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Մարտունի **07.05.2026թ.**

ժ. 10:00

Նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյանը,անդամներ՝ Ս. Աբրոյանը, Վ.Թամոյանը, Կ. Դավթյանը, Թ.Դավթյանը և հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Սիմոնյանը:

1. **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
   Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի հետևյալ օրակարգը
   1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
   2. Ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:
   3.Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու, պայմանագիր կնքելու որոշման , չկայացած չափաբժնի հայտարարման և անգործության ժամկետ հայտարարելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

2. «ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/02» ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացված հայտերում կատարված շտկումների մասին:

2.1 Հրավերի սահմանված կարգի պահանջներին համապատասխան մասնակիցներ **<<ՌԱՆ-ՇԻՆ>> ՍՊԸ ,<<Շանթ-Սեյրան>>ՍՊԸ, <<Շին-Կոմպլեքս>>ՍՊԸ << Նենասե >>ՍՊԸ կոնսորցիումի** հայտում արձանագրվել էին հրավերի սահմանված կարգի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը կասեցրել էր նիստը և հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում էր ուղարկել մասնակիցներին ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրեց **<<ՌԱՆ-ՇԻՆ>> ՍՊԸ ,<<Շանթ-Սեյրան>>ՍՊԸ, <<Շին-Կոմպլեքս>>ՍՊԸ << Նենասե >>ՍՊԸ կոնսորցիումի** կողմից ներկայացված շտկումները :

2.3 Մասնակիցների կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկվել են բոլոր անհամապատասխանությունները: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից նշված կազմակերպությունների հայտերը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

3. Ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին

3.1 ԳՄՄՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/02 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվում **<<ՌԱՆ-ՇԻՆ>> ՍՊԸ ,<<Շանթ-Սեյրան>>ՍՊԸ, <<Շին-**

Կոմպլեքս>>ՍՊԸ << Նենասե >>ՍՊԸ կոնսորցիում-ն, որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր՝ ըստ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի: Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պայմանագրի կնքման իրավասության առաջացման օրը ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3.3 Օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում կնքել այն և ներկայացնել պատվիրատուին, ինչպես նաև միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրով ներկայացնել պայմանագրրի և որակավորման ապահովումները (պայմանագրի ապահովում-գնման գնի 10%-ի չափով, որակավորման ապահովում գնման գնի 30%-ի չափով):

Ընդունվել է որոշում կողմ 5, դեմ 0:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա. Քոչարյան

Անդամներ _____ Ս. Աբրոյան

_____ Վ. Թամոյան

_____ Կ. Դավթյան

_____ Թ. Դավթյան

Քարտուղար՝ _____ Կարեն Սիմոնյան